ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 339.9 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-172*

ՄԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Hovsepyanmer@gmail.com
ORCID: 0000-0003-0299-8073

Տնտեսական պատմության առկա ընդհանրություններին ի հակադրություն՝ ԵԱՏՄ անդամ 5 երկրները ունեն զարգացման, տնտեսական կառուցվածքի, ռեսուրսապահովվածության, համաշխարհային տնտեսությունում ունեցած դերի, ներքին և արտաքին տնտեսական քաղաքականության տարբերություններ, որոնք էական դերակատարում են ունենում երկրների և միության մակրոտնտեսական կայունության և տնտեսական հավասարակշռվածության ձևավորման գործընթացում: Այս առումով հոդվածի նպատակն է ուսումնասիրել վերոնշյալ հանգամանքներից բխող տնտեսական ցուցանիշների համախումբը, որը առանցքային դեր ունի այս երկրների տնտեսական զարգացումների և արտաքին շոկերի նկատմամբ խոցելիությունների գնահատման տեսանկյունից:

Մակրոտնտեսական կայունության ապահովումը ինտեգրացիոն միավորման որդեգրած քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, սակայն համաշխարհային տնտեսության տուրբուլենտության պայմաններում արտաքին աշխարհից եկող բացասական ազդակները, ինչպես նաև ներքին խոցելիությունների կուտակումները այս հանձնառության իրականացման համար լուրջ ռիսկեր են գեներացնում:

Հոդվածում կիրառվել են ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների համադրման, վիճակագրական տվյալների վերլուծության և համեմատության մեթոդներ, որոնց արդյունքում պարզ է դառնում, որ Միության պայմանագրով նախանշված մակրոտնտեսական կայունությունը բնութագրող ցուցանիշները անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար՝ գնահատելու տվյալ ժամանակահատվածում մակրոտնտեսական կայունության տևական պահպանումը կամ խաթարումը: Հատկանշական է, որ առանձին երկրներ պարբերաբար հատում են պայմանագրով սահմանված 3 հիմնական ցուցանիշների համար սահմանված շեմային մակարդակները, ինչը հիմք է տալիս եզրակացնելու դրանց վերանայման կամ մակրոտնտեսական կայունության այլընտրանքային ցուցանիշներ սահմանելու անհրաժեշտության մասին:

Հիմնաբառեր՝ *մակրոտնտեսական կայունություն, տնտեսական ճգնաժամ, խոցելիություններ, տնտեսական ցնցումներ, շեմային ցուցանիշներ, արտաքին և ներքին հաշվեկշռվածություն, տնտեսական պարբերաշրջան:*

---

* Հոդվածը ներկայացվել է 19.02.2023թ., գրախոսվել՝ 22.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Նախաբան

Եվրասիական տնտեսական միության (Այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամ երկրների տնտեսությունների համար 2022 թ.-ը երկբեևեռ զարգացումների տարի կարելի է համարել: Մի կողմից այն լի էր արտաքին և ներքին մարտահրավերներով, մյուս կողմից դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացված գործողությունները, հակաճգնաժամային կառավարման անհրաժեշտությամբ պայմանավորված ներքին շուկայի պաշտպանության գործիքակազմի կիրառումը, պատժամիջոցների և սահմանափակումների նկատմամբ դիմակայությունը և տնտեսությունների ընդհանուր դիմադրողականության բարձրացումը մակրոտնտեսական կայունության ձևավորման էական հիմքեր կարողացան ձևավորել:

Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կարծիքով՝ կայունության և անկայունության գնահատման համար առանձին մակրոտնտեսական ցուցանիշների համար եզակի շեմեր չկան, փոխարենը գոյություն ունեն հիմնական մակրոտնտեսական փոփոխականների մակարդակների տարբեր համակցություններ, որոնց միաժամանակյա հանդես գալը կարող է վկայել մակրոտնտեսական անկայունության մասին (օրինակ՝ գնաճ, հարկաբյուջետային և ընթացիկ հաշվի դեֆիցիտ, միջազգային պահուստներ) (Ames, Brown, Devarajan, Izquierdo, 2001):

Մակրոտնտեսական կայունության թիրախավորումը՝ որպես առանցքային քաղաքականության ուղղություն, ամրագրված է ԵԱՏՄ-ի մասին 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրով, որն ընդգծում է անդամ պետությունների կայուն զարգացման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծումը (ԵԱՏՄ պայմանագիր): Միության երկրները տնտեսական քաղաքականություն ձևավորում են տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների հետևյալ շեմային մակարդակների շրջանակում.

- *Համախմբված ընդհանուր **պետական բյուջեի տարեկան դեֆիցիտը** չի գերազանցում ՀՆԱ-ի 3%-ը:*
- *Ընդհանուր **պետական կառավարման հատվածի պարտքը** չի գերազանցում ՀՆԱ 50%-ը:*
- ***Գնաճի մակարդակը** տարեկան կտրվածքով (նախորդ տարվա դեկտեմբեր-դեկտեմբեր, տոկոսային արտահայտությամբ) 5 տոկոսային կետից ավել չի գերազանցում գնաճի մակարդակը Միության ամենացածր արժեքն արձանագրած երկրին:*

Այս շեմային մակարդակները սահմանված են Պայմանագրի 63-րդ հոդվածով և մշտադիտարկվում են Հանձնաժողովի կողմից (ԵԷԿ): Դրանք, ըստ էության, համարվում են մակրոտնտեսական կայունության իրավիճակը բնութագրող բազային տվյալներ, որոնց շեմային մակարդակները այս 10 տարիների ընթացքում չեն վերանայվել կամ փոփոխությունների չեն ենթարկվել, չնայած տեղի ունեցած էական փոփոխություններին և զարգացումներին:

Վերլուծական մաս

ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական աճի դինամիկան ցույց է տալիս, որ ԵԱՏՄ անդամ բոլոր երկրները մինչճգնաժամային հատվածում արձանագրել են նշանակալի տնտեսական աճ, որը սակայն ճգնաժամերի և արտաքին շոկերի ու ցնցումների արդյունքում կտրուկ նվազել է: Անկախացումից ի վեր առաջին տասնամյակը այս երկրների համար նույնացվում է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և տնտեսական համակարգի վերափոխմամբ պայմանավորված տնտեսական անկման տարիների հետ: Ամենախորը անկումն արձանագրվել է Հայաստանում 1992 թ., իսկ ամենաքիչը՝ Բելառուսում: Այս երկրներում անկախության երկրորդ տասնամյակի մեկնարկը տալիս են նշանակալի տնտեսական աճերը, որոնք սակայն 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով վերածվում

են անկումների, ինչի արդյունքում վեր է հանվում մինչև այդ տեղի ունեցած վերելքների խոցելի կողմերի բացահայտման և տնտեսությունների կառուցվածքային փոփոխությունների խիստ անհրաժեշտությունը: Արդյունքում անդամ երկրների մոտ անհրաժեշտություն առաջացավ տնտեսական արդիականացման միջոցառումների իրականացման, քանի որ արձանագրված աճերը ոչ դիվերսիֆիկացված տնտեսական համակարգերում սոսկ քանակական ցուցանիշներ էին, այնինչ անհրաժեշտ էր ապահովել ներառական տնտեսական աճ և տնտեսությունների արդիականացում: Զարգացման երրորդ տասնամյակում (2010-2020 թթ.), չնայած արձանագրված տնտեսական զարգացումներին, մեծամասամբ այս երկրներում այդպես էլ չհաջողվեց վերադառնալ 2000-ականների աճի բարձր տեմպերին: Ավելին, Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների և նավթի համաշխարհային գների անկման հետևանքով 2014-2016 թթ.-ը համարվում են հերթական անկումային կամ տնտեսական աճի դանդաղման տարիներ: Միևնույն ժամանակ, հենց այս ընթացքում՝ 2014 թ. մայիսի 29-ին, ստորագրվեց ԵԱՏՄ-ի մասին Պայմանագիրը, որը ուժի մեջ մտավ 2015 թ. հունվարի 1-ից:



Գծապատկեր 1. ԵԱՏՄ անդամ երկրների ՀՆԱ աճի տեմպերը 1991-2022 թթ.

2016 թ.-ից տնտեսական աճն արագացավ, որը սակայն խաթարվեց 2020 թ. կորոնավիրուսային համավարակի պատճառով առաջացած «կտրուկ կանգի» ճգնաժամի հետևանքով: 2020 թ. ԵԱՏՄ երկրների համար 2008 թ.-ից ի վեր արձանագրվեցին ամենախորը տնտեսական անկումները: Ավելին, այս երկրները դեռևս չէին հասցրել հաղթահարել համաճարակի տնտեսական հետևանքները, Հայաստանի պարագայում նաև 2020-ի պատերազմը, երբ 2022 թ. սկսվեց ռուս-ուկրաինական պատերազմը՝ իր հետ բերելով տնտեսական հերթական անկայունություններ և ցնցումներ և դրանց նկատմամբ տնտեսությունների տարբերվող արձագանք: 2022 թ. ճգնաժամը ԵԱՏՄ անդամ երկրներում սկզբունքայնորեն տարբեր դրսևորումներ ցուցաբերեց, և եթե ՌԴ-ում արձանագրվեց 2% տնտեսական անկում, ապա Հայաստանում տնտեսական աճը կազմեց 12.6%:

ԵԱՏՄ անդամ երկրների ներքին հաշվեկշռվածությունը դիտարկելու համար կարևոր է ՀՆԱ ճեղքի գնահատումը, որի համար դիտարկվել է ներուժային ՀՆԱ-ի հաշվարկման գծային թրենդի և Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրը, որի օգնությամբ առավել ստույգ պատկեր է ստացվում[1]: Հաշվարկված մեթոդների արդյունքում ամենամեծ շեղումներն արձանագրվել են նախաճգնաժամային տարիներին, իսկ ԵԱՏՄ ներքին

[1] Հաշվարկում վերացվում են գործարար պարբերաշրջանի կարճաժամկետ տատանումները:

կայունությունը՝ 2010-2013 թթ. և 2018-2019 թթ.: 2008 թ. անկումից հետո 2013 թ. ԵԱՏՄ անդամ երկրները գտնվել են տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլում, այնուհետև 2016 թ.՝ հերթական անկման փուլում, որից հետո որոշակի վերելք է արձանագրվել 2019 թ.:



Գծապատկեր 2. ԵԱՏՄ իրական և պոտանցիալ ՀՆԱ-ն



Գծապատկեր 3. Տնտեսական աճի դինամիկան ԵԱՏՄ-ում և աշխարհում (Ձախ կողմ), նավթի, պղնձի համաշխարհային գների և VIX ինդեքսի դինամիկան (Աջ կողմ)

ԵԱՏՄ-ն, լինելով նորաստեղծ ինտեգրացիոն միավորում, իր մեջ ընդգրկում է տնտեսական զարգացվածության, տնտեսական կառուցվածքով, համաշխարհային շուկայում կշիռներով և մեծությամբ, տնտեսության բացության տարբեր մակարդակներում գտնվող երկրներ: Այս համատեսքտում ԵԱՏՄ արտաքին հաշվեկշռվածությունը ևս համասեռ չէ. մի դեպքում ԵԱՏՄ անդամ երկիրը կարող է

դառնալ հենց արտաքին շոկի սկզբնաղբյուրը, մյուս դեպքում ԵԱՏՄ անդամ երկիրը կրում է դրանց ազդեցությունները: Սակայն հատկանշական է, որ այս երկրների համար արտաքին շոկերի և հաշվեկշռվածության խախտումները զգալի չափով սինխրոնիզացված են, մյուս կողմից, ԵԱՏՄ-ն՝ որպես ինտեգրացիոն միավորում, իր մեջ արտացոլում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող զարգացումները, ցնցումները, շոկերը, որոնք անմիջապես դրսևորվում են տնտեսական ցուցանիշների վատթարացմամբ: Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, 2005-2022 թթ. ընթացքում աշխարհի, այդ թվում՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի զգալի տնտեսական անկումը 2009 և 2020 թթ. արձանագրվել է նաև ԵԱՏՄ երկրներում: 2016 թ. անկումը հիմնականում պայմանավորված էր ՌԴ-ի տնտեության անկմամբ, ինչը իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև ԵԱՏՄ մյուս առևտրային գործընկերների վրա: Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ տնտեսական զարգացումները համամասնական են աշխարհի և առաջատար երկրների տնտեսական աճի դինամիկային:

Վերոնշյալ արտաքին շոկերը ԵԱՏՄ երկրների տնտեսություններ են հասել միաժամանակ մի քանի փոխանցումային ուղիներով՝ տնտեսական սահմանափակումներ, հանքահումքային և էներգետիկ ռեսուրսների գների տատանումներ, դրամական փոխանցումների և ներդրումային հոսքերի կրճատումներ և այլն: Այս ուղիներով փոխանցվող շոկերը հանգեցնում են ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների խոցելիությունների ավելացման, ազդում վճարային հաշվեկշռի և պետական բյուջեի մուտքերի վրա:

Ըստ էության, ԵԱՏՄ անդամ երկրները համաշխարհային տնտեսությունում հիմնականում դիրքավորված են հումքային, էներգետիկ ռեսուրսների արտահանմամբ, ինչն ընդգծում է այս խոցելիությունների շրջանակը: Մասնավորապես ԵԱՏՄ անդամ երկրներում նավթի արտադրությունը տարեկան 634 մլն. տոննա է՝ համաշխարհային ցուցանիշի 14.5 տոկոսը: Գազի արտադրության համաշխարհային մասնաբաժնի 20,2%-ը բաժին է ընկնում հենց ԵԱՏՄ-ին՝ զբաղեցնելով աշխարհում 1-ին հորիզոնականը: Ածուխի արդյունահանմամբ ԵԱՏՄ-ն աշխարհում 4-րդն է՝ ապահովելով համաշխարհային մասնաբաժնի 6.5%-ը: Էլեկտրաէներգիայի արտադրությամբ ԵԱՏՄ-ն աշխարհում 4-րդն է կամ ապահովում է համաշխարհային մասնաբաժնի 4.9%-ը: ԵԱՏՄ-ն բավարարում է գյուղատնտեսական արտադրանքի համաշխարհային ցուցանիշի 5,5%-ը, իսկ համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ընդամենը 2,2%-ը (ԵՏՀ): Այս ցուցանիշների թվարկումը միայն բավարար է Միության անդամ երկրների տնտեսություններն արտաքին շոկերից զգայունությունն ընդգծելու համար: 2008, 2020, 2022 թթ. ճգնաժամերի ազդեցությունն անդրադարձել է նաև միջազգային ֆոնդային շուկայի վրա՝ էական տատանումների ենթարկելով ամերիկյան S&P 500 ֆոնդային ինդեքսի տատանողականությունը արտացոլող VIX ինդեքսը: 2008 թ. այն հասել է 70.3-ի, իսկ 2020 թ.՝ 66.04-ի, ինչը ոչ ռիսկային ժամանկահատվածների համեմատ ավել է 3-4 անգամ:

Անդրադառնալով ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական կայունությանը՝ հաջորդիվ ներկայացված են ԵԱՏՄ Պայմանագրով սահմանված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների դինամիկան Միության անդամ երկրներում, հատկապես ԵԱՏՄ կազմավորումից ի վեր: Մասնավորապես՝

1. **Գնաճի մակարդակը** (սպառողական գների ինդեքս): Միության բոլոր անդամ երկրներում 2022 թ. դեկտեմբերին փաստացի գնաճը եղել է պայմանագրով սահմանված հաշվարկային արժեքի սահմաններում (13,3% մակարդակում, որն ամենաբարձր արժեքն է Միության ձևավորումից՝ 2015 թ.-ից ի վեր):

2015-2022 թթ. գնաճի մակարդակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ անդամ երկրներից Ռուսաստանը (2015-2016 թթ.), Բելառուսը (2015-2016 թթ. և, 2018 թ.) Ղազախստանը (2015-2016 թթ., 2022 թ.), Ղրղզստանը (2020 թ., 2022 թ.) հաճախակի գերազանցել են ԵԱՏՄ պայմանագրով նախանշված

մակարդակը, և այդ շեղումները տեղի են ունեցել հատկապես ճգնաժամային կամ անկայունությունների տարիներին: ԵԱՏՄ անդամ երկրներից միայն Հայաստանը երբևէ չի շեղվել նշված մակարդակից: Միության բոլոր անդամ երկրներում 2021 թ. դեկտեմբերին փաստացի գնաճի մակարդակները եղել են Պայմանագրով սահմանված հաշվարկային արժեքի սահմաններում (12,7% մակարդակում, որը ևս ամենաբարձրն է եղել 2015 թ.-ից ի վեր): Իսկ արդեն 2022 թ. այն կազմել է 13.3% (Ղրղզստանը և Ղազախստանը հաշվարկային արժեքից շեղվել են)՝ գերազանցելով նաև 2021 թ. ցուցանիշը:

Հատկանշական է, որ վերջին 20 տարիների ընթացքում ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում նկատելի են գնաճի մակարդակների կտրուկ տատանումներ հատկապես ճգնաժամային ժամանակահատվածներում:



Գծապատկեր 4: Գնաճի մակարդակը ԵԱՏՄ անդամ երկրներում, տարիների կտրվածքով գնաճի թույլատրելի շեմերը՝ ըստ ԵԱՏՄ Պայմանագրի

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ-ում գների ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2008, 2016, 2022 թթ., իսկ ամենացածր մակարդակը՝ 2018 թ.՝ 3.2 տոկոս: Այդ թվում՝ 2022 թ. երկրների մեծ մասում արդյունաբերական արտադրանքի գները գագաթնակետին են հասել 2022 թ. մարտին, իսկ սպառողական գները՝ ապրիլին:

2. **Պետական կառավարման հատվածի պարտքը:** 2022 թ. հունիսի դրությամբ Հայաստանը և Ղրղզստանը հատել են Պայմանագրով սահմանված 50%-ի շեմը՝ համապատասխանաբար կազմելով 56.4% և 56%: Նկատենք, որ այս շեմը բավական ցածր է Ռուսաստանում և Ղազախստանում, իսկ Բելառուսում միջինում տատանվում է 35-40%-ի սահմաններում:

Վերջին 2 տասնամյակներում կառավարության պարտք/ՀՆԱ-ի շարժընթացի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ երկրներից ՌԴ-ն, Ղազախստանը և Բելառուսը 50 տոկոսի շեմը չեն գերազանցում, Ղրղզստանը մինչև 2008 թ. էականորեն նվազեցրել է կառավարության պարտքը, սակայն 2008 թ. ճգնաժամից հետո այն սկսել է պարբերաբար գերազանցել այդ մակարդակը հատկապես 2015-2016 թթ. և 2020-2022 թթ.:



Գծապատկեր 5: ԵԱՏՄ անդամ երկրների Կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, 2000-2022 թթ.

Հայաստանն առաջին անգամ հատել է շեմային ցուցանիշը 2016 թ. անկայունությունների ժամանակահատվածում, որից հետո մինչև 2019 թ. պահպանվել է 51 տոկոսը գերազանցող ցուցանիշ, 2019 թ. այն կազմել է 50.9, իսկ 2020 և 2021թթ. արդեն գերազանցել է 60%-ի սահմանագիծը, համապատասխանաբար՝ 63.4 և 60.2: Ըստ էության, 2021 թ. նշված ցուցանիշը գերազանցել են Հայաստանը և Ղրղզստանը:

2022 թ. հուլիսի 1-ի դրությամբ ԵԱՏՄ անդամ երկրների ընդհանուր պետական պարտքն աճել է 28%-ով (2021 թ. նույն օրվա համեմատ) և հասել 438,8 մլրդ ԱՄՆ դոլարի: ԵԱՏՄ պետական պարտքի աճը պայմանավորված է ՌԴ-ի ներքին պարտքի համաչափ աճով՝ 213,6 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 311,7 մլրդ ԱՄՆ դոլար: Փաստացի, Հայաստանում, Ղրղզստանում և Ռուսաստանում 2022 թ. ՀՆԱ-ի նկատմամբ պարտքը նվազել է, որի հիմնական պատճառներից մեկն ազգային արժույթի ամրապնդումն էր: Իրական ՀՆԱ-ի աճը նպաստել է Ղազախստանի ՀՆԱ-ի նկատմամբ ընդհանուր պետական պարտքի նվազմանը: ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների ընդհանուր միտումը եղել է իրական տոկոսադրույքի և բյուջեի առաջնային դեֆիցիտի նվազումը, ինչն էական դեր է ունեցել Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի ընդհանուր պարտքի մակարդակի կրճատման վրա:

3. **Պետական բյուջեների դեֆիցիտը:** Այս ցուցանիշի շեմային մակարդակը Հայաստանը գրեթե միշտ գերազանցում էր, Ղազախստանը՝ 2020-2021 թթ., Ղրղզստանը՝ 2016 թ., Ռուսաստանը՝ 2020 թ.: Այսպիսով, 2021 թ. այս ցուցանիշի շեմային մակարդակը խախտել են Հայաստանը և Ղազախստանը, իսկ արդեն 2022 թ. հունիսի վերջին Պայմանագրով սահմանված մակարդակը չի գերազանցվել և ոչ մի անդամ երկիր: 2022 թ. հարկաբյուջետային հաշվեկշռի բարելավումը հիմնականում պայմանավորված էր հարկային եկամուտների աճով, էներգետիկ ապրանքների համաշխարհային գների բարձրացմամբ, առանձին երկրների տնտեսական բարենպաստ զարգացումներով:

Հատկանշական է, որ ԵԱՏՄ անդամ երկրներն էականորեն տարբերվում են համախմբված պետական բյուջեի դեֆիցիտի դինամիկայով. օրինակ Բելառուսը մինչ 2020 թ. ունեցել է հավելուրդային բյուջե, Ռուսաստանը վերջին տարիներին ևս ունի հավելուրդային բյուջե՝ բացառությամբ 2020 թ.-ի, իսկ մյուսները հիմնականում

պակասուրդային բյուջե ունեն՝ բացառությամբ առանձին տարիների, ինչպիսին օրինակ 2022 թ.-ն էր:



Գծապատկեր 6: ԵԱՏՄ անդամ երկրների պետական բյուջեների դեֆիցիտը, 2015-2022, % ԵԱՏՄ շեմային սահմանաչափ

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԵԱՏՄ անդամ երկրներում կորոնավիրուսային համավարակի «կտրուկ կանգի» ճգնաժամից հետո հարկաբյուջետային քաղաքականությունն աստիճանաբար կարգավորվել է, ինչի մասին որոշակիորեն վկայում է նաև բյուջեի դեֆիցիտի աստիճանական նվազումը: Տնտեսությունների վերականգնման հետ հարկային եկամուտները սկսեցին աճել արագացված տեմպերով, ինչի արդյունքում մի շարք անդամ պետություններում հարկային եկամուտները գերազանցել են տարեսկզբի կանխատեսումները: Սրան նպաստեցին համաշխարհային շուկայում հումքի, էներգակիրների գների բարձրացումները, որի արդյունքում ավելացել են արտահանման եկամուտները, ակտիվացել գործարար միջավայրը, փոփոխվել մատակարարումների շղթաները և այլն: Ընդհանուր առմամբ, Միության հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը տատանվում է 8.3-20 տոկոսի սահմաններում, ինչը բարելավման կարիք ունի գրեթե բոլոր ԵԱՏՄ անդամ երկրներում: Հարկաբյուջետային քաղաքականությունը զարգացած երկրների մեծ մասում մնաց հարմարվողական, ծախսերը սկսեցին նվազել, բայց դեռևս բարձր էին համաճարակային մակարդակից (ԵԷԿ, 12):

Ուշադրության է արժանի նաև ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների դրսևորած վարքագծի ուսումնասիրությունը: Եթե հիմնական զարգացումների փուլում ազգային արժույթները ունեցել են համադրելի վարքագիծ, ապա տնտեսական անկայունությունների ժամանակաշրջանում դրանք զգալի տարբերվել են: Բացառություն է կազմում բելառուսական ռուբլին, որի դինամիկան ներկայացված է առանձին գծապատկերով, քանի որ վերջինս այս տարիների ընթացքում արժեզրկումների մի քանի փուլ է անցել:

Նախ 2009 թ. հունվարի 2-ին Ազգային բանկը նվազեցրեց տոկոսադրույքը միանգամից 20%-ով: ԱՄՆ դոլարի փոխարժեքը բելառուսական ռուբլու նկատմամբ եղել է 2790 բելառուսական ռուբլի, իսկ եվրոն՝ 3703: 2011 թ.-ը Բելառուսում նշանավորվեց արժութային ճգնաժամով, որի պատճառներից էին նախագահական ընտրություններից առաջ աշխատավարձերի բարձրացումը, արտահանվող ապրանքների մրցունակության նվազումը, պետության բարձր վարչական ծախսերը,

ընդհանուր առմամբ հանրային ֆինանսների կառավարման հիմնահարցերը: Մայիսի սկզբին Ազգային բանկը հայտարարում է կանխիկ արժույթի շուկայում փոխարժեքի սահմանման սահմանափակումների վերացման մասին, սակայն առաստաղ է սահմանում մեկ դոլարի դիմաց 4000 բելառուսական ռուբլի: Այս քայլը ազգային արժույթը 30 տոկոսով արժեզրկման հանգեցրեց:

Մայիսի վերջի դրությամբ բելառուսական ռուբլու պաշտոնական փոխարժեքը դոլարի նկատմամբ սահմանվել էր 4930 ռուբլի: Բելառուսական արժույթը մեկ ամսվա ընթացքում արժեզրկվել է շուրջ 56%-ով: 2011 թ. վերջի դրությամբ դոլարի պաշտոնական փոխարժեքը սահմանվել էր 8380 բելառուսական ռուբլի՝ հունվարի սկզբի 3000-ի փոխարեն: 2012 թ. սկզբին պաշտոնական փոխարժեքը 1 դոլարի դիմաց 8160 ռուբլի էր, եվրոյի նկատմամբ՝ 1070: Այնուհետև աստիճանաբար կայունացման տեմպեր արձանագրվեցին: 2016 թ. հուլիսին իրականացվեց ազգային արժույթի հերթական դենոմինացիան՝ չորս զրոյով նվազել է դրամական արժեքը:





Գծապատկեր 7: ԵԱՏՄ անդամ երկրների ազգային արժույթները՝ արտահայտված ԱՄՆ դոլարով, բելառուսական ռուբլու փոխանակային կուրսը (աջ գրաֆիկ)

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ սահմանված ցուցանիշներից ամենամեծ շեղումներն արձանագրվել են նախաճգնաժամային տարիներին, իսկ ԵԱՏՄ ներքին կայունությունը՝ 2010-2013 թթ., 2018-2019 թթ.: Ըստ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի դաշնային հետազոտական կենտրոնի փորձագետների՝ այս ցուցանիշների դինամիկան չի կարող որակապես բնութագրել ԵԱՏՄ երկրների տնտեսական աճի կայունությունը (Ռյազանցև, Ռոստովսկայա, Զոլոտարևա, 971):

Եզրակացություն

ԵԱՏՄ-ում անդամ երկրների տնտեսությունում արձանագրված տնտեսական զարգացումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական

պարբերաշրջանները արդյունք են համաշխարհային տնտեսությունում արձանագրվող փոփոխությունների: Տարբեր ուղիներով կապված լինելով արտաքին աշխարհի զարգացումներին՝ այս երկրներում ձևավորվել է արտաքին գործոններից կախվածության զգալի շրջանակ, որի հետևանքով արտաքին տնտեսական յուրաքանչյուր տատանում արտացոլվում է երկրների առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների վարքագծերում: Արդյունքում, չնայած ԵԱՏՄ պայմանագրով որպես մակրոկայունության ցուցանիշներ սահմանված 3 հիմնական ցուցանիշների՝ գնաճի, պարտքի և դեֆիցիտի շեմային մակարդակների, այնուամենայնիվ սրանք անհրաժեշտ, բայց ոչ բավարար ցուցանիշներ են՝ եզրակացնելու՝ արդյոք տվյալ ժամանակահատվածում խաթարվել է մակրոտնտեսական կայունությունը, թե ոչ: Հատկանշական է, որ բոլոր 3 ցուցանիշների պարագայում էլ առանձին երկրներ պարբերաբար հատում են սահմանված շեմային ցուցանիշները, ինչը ենթադրում է փոփոխվող իրողությունների պարագայում դրանց վերանայման անհրաժեշտության մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եվրասիական Տնտեսական Միության Մասին Պայմանագիր, 29 մայիսի, 2014, https://www.arlis.am/documentview.aspx?docID=95203:
2. ԵՏՀ պաշտոնական վիճակագրական տվյալներ, http://www.eurasiancommission.org/ru/Pages/ses.aspx
3. ԵԷԿ, Годовой доклад за 2021 год.https://eec.eaeunion.org/upload/medialibrary/d19/Annual_report_2021.pdf, Доступно: 18.03.2023.
4. ԵԷԿ, Макроэкономический доклад – 2022, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/b59/Analytical_report_2022.pdf, Доступно: 18.03.2023.
5. ԵԷԿ, Мониторинг экономических показателей государств-членов ЕАЭС, https://eec.eaeunion.org/comission/department/dep_makroec_pol/monitoring/, Доступно: 18.02.2023.
6. Brian Ames, Ward Brown, and etc, “Macroeconomic Policy and Poverty Reduction”, Prepared by the International Monetary Fund and the World Bank, August 2001, https://www.imf.org/external/pubs/ft/exrp/macropol/eng/#:~:text=Macroeconomic%20stability%20exists%20when%20key,expenditure%2C%20and%20savings%20and%20investment. Accessed: 18 Feb, 2023.
7. Sergey V. Ryazantsev, Tamara K. Rostovskaya, Olga A. Zolotareva, (2021). System for Measuring the Socio-Economic Sustainability of the Eurasian Economic Union. Ekonomika regiona [Economy of region], 17(3), 971-986, https://doi.org/10.17059/ekon.reg.2021-3-18. Accessed: 18 Feb, 2023.

WORKS CITED

1. “EJEK, Godovoj doklad za 2021”, [Eurasian Economic Committee, Annual Report, 2021] https://eec.eaeunion.org/upload/medialibrary/d19/Annual_report_2021.pdf, Accessed: 18 Feb, 2023 (in Russian).
2. “EJeK, Makrojekonomicheskij doklad – 2022”, [Eurasian Economic Committee, Macroeconomic Report]

https://eec.eaeunion.org/upload/medialibrary/b59/Analytical_report_2022.pdf , Accessed: 18 Feb, 2023 (in Russian).

3. EJeK, Monitoring jekonomicheskih pokazatelej gosudarstv-chlenov EAJeS", [Eurasian Economic Committee, Monitoring of economic indicators of the EAEU member states], https://eec.eaeunion.org/comission/department/dep_makroec_pol/monitoring/, Accessed: 18 Feb, 2023. (In Russian)

4. Eurasian Economic Committee, official statistical data, http://www.eurasiancommission.org/ru/Pages/ses.aspx

5. Ryazantsev, S. V., Rostovskaya, T. K. & Zolotareva, O. A., "Sistema izmerenij ustojchivosti social'no-jekonomicheskogo razvitija stran EAJeS, Ekonomika regiona [System for Measuring the Socio-Economic Sustainability of the Eurasian Economic Union.]", 2021. 17(3), 971-986, https://doi.org/10.17059/ekon.reg.2021-3-18. Accessed: 18 Feb, 2023. (In Russian)

6. "Evrasiakan Tntesakan Miutyan Paymanagir" May 29, 2014 [Treaty on the Eurasian Economic Union], https://www.arlis.am/documentview.aspx?docID=95203, Accessed: 18 Feb, 2023. (in Armenian)

INDICATORS OF MACROECONOMIC STABILITY IN THE EAEU MEMBER STATES

MERI HOVSEPYAN

Armenian State University of Economics,
Faculty of Economy Regulation and International Economic Relations,
Department of International Economic Relations, Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia

Despite the unifying features in the economic history, the 5 EAEU member states have differences in terms of developments, economic structure, resource provision, role in the world economy, internal and external economic policies, which play a significant role in the process of forming countries' macroeconomic stability and economic balance. In this sense, it is important to study the set of economic indicators resulting from the above circumstances, which has a key role in terms of evaluating the economic developments and vulnerabilities of these countries to external shocks. Ensuring macroeconomic stability is one of the most important directions of the policy adopted by the integration union, however, in the conditions of the turbulence of the global economy, the negative impulses coming from the outside world, as well as the accumulation of internal vulnerabilities, generate serious risks for the implementation of this commitment.

As a result of comparing macroeconomic indicators of EAEU member states, statistical data analysis and comparison methods used in the article, it becomes clear that the indicators characterizing macroeconomic stability specified by the Union agreement are necessary, but not sufficient to assess the long-term preservation or disruption of macroeconomic stability in a given period. It is noteworthy that individual countries regularly exceed the threshold levels set for the 3 main indicators defined by the agreement, which gives grounds for concluding about the need to review them or define alternative indicators of macroeconomic stability.

Keywords: *macroeconomic stability, economic crisis, vulnerabilities, economic shocks, thresholds, external and internal balance, economic cycle*.

ПОКАЗАТЕЛИ МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ В ГОСУДАРСТВ-ЧЛЕНАХ ЕАЭС

МЕРИ ОВСЕПЯН
аспирантка кафедры международных экономических отношений факультета регулирования экономики и международных экономических отношений Государственного экономического университета Армении, в. Ереван, Республика Армения

Несмотря на объединяющие особенности в экономической истории, члены-государства ЕАЭС имеют существенные различия в плане развития, экономической структуры, ресурсной обеспеченности, роли в мировой экономике, внутренней и внешней экономической политике. Всё это играет существенную роль в процессе формирования макроэкономической стабильности и экономической сбалансированности страны. В этом смысле важно изучить совокупность экономических показателей, вытекающих из вышеуказанных обстоятельств, которые играют ключевую роль с точки зрения оценки экономического развития и уязвимости этих стран к внешним шокам.

Обеспечение макроэкономической стабильности является одним из важнейших направлений политики, принятой интеграционным объединением, однако в условиях турбулентности мировой экономики негативные импульсы из внешнего мира, а также накопление внутренних уязвимостей порождают серьезные риски для реализации этого обязательства.

В результате сопоставления макроэкономических показателей государств-членов ЕАЭС с использованием статистического анализа данных и методов сравнения, становится ясно, что показатели, характеризующие макроэкономическую устойчивость, предусмотренные Союзным соглашением, необходимы, но недостаточны для оценки долгосрочного сохранения или нарушения макроэкономической стабильности. Примечательно, что отдельные страны регулярно превышают пороговые уровни, установленные для 3-х основных показателей, определенных соглашением, что дает основание сделать вывод о необходимости их пересмотра или определения альтернативных показателей макроэкономической стабильности.

Ключевые слова: *макроэкономическая стабильность, экономический кризис, уязвимости, экономические шоки, пороговые показатели, внешний и внутренний баланс, экономический цикл*.